

ՄԱՆԿԱԿԱՆ ԴԵՊՐԵՍԻԱ: ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Դեպրեսիան հոգեկան դժվարություն է, որը կարող է խոցել մարդուն ցանկացած տարիքում: Չնայած որ երեխաների ախտանիշները շատ նման են մեծահասակների ախտանիշներին, նրանց մոտ դեպրեսիան կարող է մնալ աննկատ և չբուժված: Դեպրեսիվ երեխաները կարող են սխալ հասկացվել, և նրանց վերագրվեն տխուր, դժվար, անցանկալի վարք ունեցող որակները:

ՄԱՆԿԱԿԱՆ ԴԵՊՐԵՍԻԱՅԻ ՆՇԱՆՆԵՐԸ`

- Տխրություն և գերգրգռվածություն ժամանակի մեծ մասում (կաշունություն, ագրեսիա, լաց)
- Ակտիվության նվազում, ընկերական շրջապատի հանդեպ հետաքրքրության կորուստ
- Ակադեմիական դժվարություններ
- Քնելու և սնման դժվարություններ
- Բացասական մտածողություն (ցածր ինքնագնահատական, չափազանց մեղադրանք, անհանգստություն, մտքեր հոգնածության և ապրել չցանկանալու վերաբերյալ)

ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ`

Մանկական դեպրեսիան հաճախ ի հայտ է գալիս տագնապի, ՈՒԽՀԽ, ինչպես նաև վարքային դժվարությունների հետ մեկտեղ: Հաճախ սրանց վրա կենտրոնացումը շեղում է դեպրեսիայի բուժումից:

Տրավմատիկ իրավիճակները (բուլինգ, բռնություններ, կորուստ, տեղահանում, ամուսնալուծություն և այլն) կարող են դառնալ դեպրեսիայի շարժառիթ: Սակայն, այն կարող է ի հայտ գալ նաև առանց որևէ նման դեպքերի:

ԲՈՒԺՈՒՄ`

Թերապիա

(խաղային թերապիա, վարքաբանական-կոգնիտիվ, ընտանեկան հոգեթերապիա. երեխաները սովորում են հաղթահարման վարքաձևեր, շփման հմտություններ, հույզերի կառավարում)

Խնամողների աջակցություն

(երեխային մասնագետի մոտ տանելը, տանը առաջարկները և ցուցումներն իրականացնելը, ապահով հենարան լինելը)

Դեղորայք

Որոշ դեպքերում դեղորայքը ցուցված է լինում բժշկի, հոգեբույժի կողմից և ուղեկցում է հոգեթերապևտիկ ընթացքը: